

# Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի

## ռեկտոր Ա.Ս.Աղաբաբյանի

### 2012թ. տարեկան հաշվետվություն

Հաշվետու տարում Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանը (այսուհետ կրճատ՝ ԵՄԽՀ) գործունեությունը ծավալել է ԵՄԽՀ զարգացման 2011-12 ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանին համապատասխան:

ԵՄԽՀ -ն, ունենալով մանկավարժական և գիտակրթական ուղղվածություն և հակված լինելով կրթական բարեփոխումների ու կրթական միասնական դաշտի ստեղծմանը, առաջնային նշանակություն է տալիս հետևյալ խնդիրների լուծմանը:

- ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու կատարելագործմանը
- կրթության որակի ներքին ապահովման համակարգի ստեղծմանը
- գիտահետազոտական գործունեության ընդլայնմանը
- կրթության բովանդակության հարստացմանն ու որակի բարձրացմանը:

Մանկավարժական և գիտակրթական գործընթացներին զուգահեռ համալսարանում առանձնակի ուշադրություն է դարձվում նաև տնտեսական և ենթակառուցվածքների զարգացման ոլորտներին:

Առանձնակի պետք է ընդգծել ուսանողական կազմակերպությունների աշխատանքը, որոնք իրենց ակտիվ գործունեությամբ անհամեմատ ավելի արդյունավետ են դարձնում համալսարանի մանկավարժական և գիտակրթական գործունեությունը:

Փորձենք ավելի հանգամանալից ներկայացնել համալսարանի գործունեությունը ըստ վերոհիշյալ ոլորտների:

**ԵՄԽՀ-ի առաքելության և նպատակների  
իրականացման, գնահատման և վերանայման  
գործունեություն**

ԵՄԽՀ-ի 2010թ. դեկտեմբերի 10-ի N 01/012 խորհրդի նիստում հաստատված ռազմավարական ծրագրի համաձայն ԵՄԽՀ-ը կրթության քաղաքականության, գիտահետազոտական աշխատանքների և կրթության ոլորտներում իր որդեգրած առաքելությունն է համարում՝

- առաջնորդվել ուսանողներին որակյալ, ժամանակակից և պահանջարկ վայելող կրթություն ապահովելու և միջազգային կրթական չափանիշներին համապատասխանելու սկզբունքով, իր գործունեության հիմքում դնելով հասարակության հետ շփումների բարձր էթիկան, արդարությունը և ազնվությունը:
- պատրաստել մասնագիտական խորը գիտելիքներով օժտված բարձրորակ կադրեր, որոնք իրենց ձեռք բերած տեսական և գործնական գիտելիքների օգնությամբ, ստացած մասնագիտական որակավորմանը համապատասխան, ունակ լինեն ծավալելու բեղմնավոր մասնագիտական գործունեություն սոցիալալտեսական, գիտատեխնիկական, մշակութային և այլ բնագավառներում:
- ապահովել հիմնական կրթական ծրագրի ուսուցման այնպիսի մակարդակ, որը հնարավորություն կտա շրջանավարտներին դառնալու մրցունակ աշխատաշուկայում և հնարավորինս նպաստել հանրապետության տնտեսական զարգացմանն ու բարգավաճմանը:

Որպես մասնագիտական ուսումնական հաստատություն՝ համալսարանն իր գերակա նպատակներն ու խնդիրներն է համարում.

*1. Կրթության քաղաքականության ոլորտում՝*

- ինտեգրվել համաշխարհային կրթական համակարգին՝ առաջնորդվելով ՀՀ և Եվրոպական կրթական չափանիշներով և չափորոշիչներով:

## 2. *Գիտահետազոտական աշխատանքների ոլորտում՝*

- նպաստել համալսարանում գիտահետազոտական աշխատանքների կատարմանը, գիտական պրպտումների մեջ ներգրավելով ոչ միայն պրոֆեսորադասախոսական անձնակազմին, այլև ուսումնառողներին,
- սերմանել ու զարգացնել ուսանողության շրջանում գիտաուսումնական, գիտահետազոտական աշխատանքները, գնահատել և խրախուսել ստացված արդյունքները:

## 3. *Կրթության ոլորտում*

- դառնալ եվրոպական չափանիշներին համապատասխանող, Բոլոնիայի հռչակագրի դրույթներին հավատարիմ կրթական հաստատություն, որն իր աշխատանքի հիմքում դրել է ժողովրդավարական, մարդասիրական և սոցիալմշակութային առաջատար սկզբունքները:
- կերտել մրցունակ կադրեր, որոնք կլինեն համապատասխան ժամանակակից կրթական շուկայի պահանջներին:

Համալսարանում գործում է ռազմավարական ծրագրի գնահատման գործընթաց: Այն ներառում է բուհի խորհրդի, գիտական խորհրդի և ֆակուլտետային քննարկումներ՝ կապված ռազմավարական ծրագրում նախանշված գործունեության ուղղությունների, կատարման ընթացքի տևողության և հնարավոր եղանակներից լավագույնի ընտրման հետ:

Համալսարանի նախանշած առաքելության՝ կրթական շուկային բարձրորակ և մրցունակ կադրեր տրամադրելու գործի, իրականացմանը ներգրավված են ողջ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը: Ուսումնառողների մասով նույնպես ներգրավվածություն առկա է համալսարանում գործող ուսանողական միավորումների՝ ուսանողական խորհրդի և ուսանողական գիտ. ընկերության ներկայացուցիչների ընդգրկվածությամբ համալսարանական և ֆակուլտետային կառույցներում:

Հաշվետու տարում ԵՄԽՀ-ում գործել է նաև առաքելության, սահմանած նպատակների և խնդիրների վերանայման քաղաքականություն, որը պայմանավորված է համալսարանի կառավարման խորհրդի և գիտական խորհրդի

ընդունած որոշումներից բխող անհրաժեշտությամբ, նպատակների իրականացման և առաջացած խնդիրների լուծման ճանապարհին բխող միջոցառումներով: Հաշվետու տարում համալսարանի ռազմավարական ծրագրի վերանայման և ճշգրտման գործընթացներում իրականացվում են հանդիպումներ, քննարկումներ և հարցումներ ներքին և արտաքին շահակիցների հետ: Վերանայման գործընթացում առաջացած փոփոխությունները զետեղվում են նաև համալսարանի էլեկտրոնային կայքում՝ ապահովելով հրապարակայնություն:

Հաշվետու տարում տարբեր շահառուների հետ կազմակերպված բազմաթիվ հանդիպումների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությանը՝

- ✓ Տարբեր շահառուներ իրենց պահանջները դնում են յուրաքանչյուրը իր տեսանկյունից (քանի որ Հայաստանում ձևավորված չէ արտաքին շահառուների կողմից կարգավորված ձևով կամ միասնական պահանջներ, շահառուն գործում է տարերայնորեն, այդ պատճառով տարբեր շահառուներ դնում են տարբեր պահանջներ):
- ✓ Արտաքին և ներքին շահառուների պահանջները շատ անգամ իրարից տարբերվում են ոչ միայն պահանջների բնույթով, այլ նաև դրանց որակական կողմով, ինչպես նաև անհամադրելի ցանկություններով՝ կախված առաջարկի և պահանջարկի հետ:

Ներքին շահակիցների կարիքների բացահայտման համար համալսարանում իրականացվում են հետևյալ մեխանիզմները՝

- հանդիպումներ և քննարկումներ,
- հարցումներ,
- սեմինարներ

Ուսանողության շրջանում անցկացվում են հարցումներ՝ դասախոսական կազմի գնահատման, բուհի ընդհանուր գործունեության գնահատման և պրակտիկայի անցկացման վերաբերյալ, նաև շրջանավարտների շրջանում: Ինչպես նաև ուսանողների կարիքների և առաջարկությունների համար նախատեսված է առաջարկությունների արկղիկ, որտեղ ուսանողները կարող են տեղադրել իրենց անանուն կարծիքներն ու առաջարկությունները բուհի այս կամ այն գործընթացի

վերաբերյալ: Ուսանողների կարիքների հետ առնչվող հարցերով զբաղվում է նաև բուհում ստեղծված ուսանողների իրավունքների պաշտպանը, որն իր գործունեությամբ անմիջական համագործակցում է բուհի ղեկավար անձնակազմի հետ: Ուսանողների հետ հանդիպումներն ու սեմինար քննարկումները իրականացվում են բուհի ղեկավար անձնակազմի, այդ թվում անձամբ ռեկտորի, և համապատասխան մասնագետների օժանդակությամբ և անմիջական մասնակցությամբ:

Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների վերհանման համար նույնպես պարբերաբար իրականացվում են հարցումներ, որոնք բացահայտում են բուհի գործունեության վերաբերյալ դասախոսական կազմի կարծիքը և արդյունավետության բարձրացմանը միտված առաջարկություններ:

Արտաքին շահակիցների կարիքների բացահայտման համար մինչ այժմ հստակ իրականացվող մեխանիզմներ առկա չէին: Դրանք իրականացվել են հիմնականում հանդիպումների միջոցով գործատուների և շահագրգիռ կողմերի հետ: Այդ ուղղությամբ նախատեսվում է նաև ընդլայնել ԵՄԽՀ-ի Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի աշխատանքները՝ ապահովելով նաև կապը շրջանավարտների և գործատուների միջև:

Ներկայումս համալսարանում ստեղծվել և իրականացվում են արտաքին շահակիցների կարիքների վերհանման նոր մեխանիզմներ, այդ թվում՝ պրակտիկա ացկացնող կազմակերպությունների և գործատուների շրջանում անցկացվող հարցումներ, ինչպես նաև համապատասխան ոլորտի հայտնի մասնագետների կարծիքների հավաքագրում և վերլուծություն:

ԵՄԽՀ-ի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատումը և բարելավմանն ուղղված քայլերի որոշումը տեղի է ունեցել առաքելության այս կամ այն խնդրին ուղղված հարցերի օրակարգային քննարկման տեսքով՝ համալսարանի գիտական խորհրդում, համաձայն տարեկան հաստատված աշխատանքային պլանի: Գնահատումը հիմնականում ներառում է քննարկումներ և որոշումների ընդունում համապատասխան հարցերի շուրջ: Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատումն ուղեկցվել է համապատասխան ձեռքբերումների և ի հայտ եկած խոչընդոտների քննարկմամբ:

Միաժամանակ քննարկվել են խնդիրների հաղթահարման և արդյունքների բարելավման նոր մեխանիզմներ:

Ներկայումս քննարկման փուլում է գտնվում պաշտոնապես հաստատված մեխանիզմի և ընթացակարգի մշակումը, որը միտված կլինի առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատմանն ու բարելավմանը:

ԵՄԽՀ-ում առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման գործընթացներում շահակիցների (դասավանդողների, ուսումնառողների) ներգրավվածությունը ապահովվում է բուհի գիտական խորհրդում, կառավարման խորհրդում, ուս. խորհրդում և ցանկացած հարցի վերաբերյալ քննարկման և հանդիպումների ժամանակ նրանց պարտադիր ներգրավվածությամբ (համաձայն կանոնադրությունների համապատասխան տոկոսային հարաբերությամբ) և ակտիվ մասնակցությամբ: Բացի այդ նրանց գնահատականի վերաբերյալ կարելի է կարծիք կազմել նաև նրանց հետ անցկացված հարցումների միջոցով:

Առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման լավագույն մեխանիզմներից մեկը բուհի տարբեր տարիների շրջանավարտների կարծիքների համադրումն է, որոնք աշխատում են արտադրություններում համապատասխան մասնագիտություններով: Այդ նպատակով բուհն իրականացնում է հարցումներ շրջանավարտների շրջանում՝ ստանալով նրանց գնահատականը բուհի գործունեության վերաբերյալ: Բուհում ստեղծված է շրջանավարտների միություն և կարիերայի կենտրոն, որի միջոցով ապահովվելով կապը շրջանավարտների հետ, հաշվի առնելով նրանց կարծիքները և առաջարկությունները հնարավոր կլինի ավելի ճշգրիտ գնահատել բուհի կատարած քայլերը առաքելության և նպատակների իրականացման գործում:

Արտաքին շահակիցների կողմից արդյունքների գնահատման համար իրականացվում են նաև հարցումներ պրակտիկա անցկացնող կազմակերպությունների և գործատուների շրջանում: Որպես արտաքին շահակցի ներգրավվածություն կարելի է նշել նաև հնարավորության դեպքում արտադրություններից ներգրավված համապատասխան մասնագետների առկայությունը ավարտական քննական հանձնաժողովների կազմում:

ԵՄԽՀ-ի ռազմավարական ծրագրի գործունեության ուղղությունները, դրանց կատարման ընթացքն ու արդյունավետությունը արտահայտող խնդիրները ըստ տարիների և գործունեության ուղղությունների ներկայումս ամենաքննարկելի հարցերն են համալսարանի նիստերում:

ԵՄԽՀ-ի ռազմավարական ծրագրի իրականացման գնահատումը կատարվում է հիմնվելով բուհում հաշվետվողականության նոր մեխանիզմի հիման վրա, որը իրականացվում է հետևյալ կերպ՝

- Բուհի ադմինիստրատիվ աշխատողների կողմից իրականացվում է գործունեության շաբաթական պլանավորում, իսկ շաբաթվա վերջում համապատասխան ձևաչափով հաշվետվության ներկայացում ռեկտորին:
- Պրոֆեսորադասախոսական կազմի կողմից յուրաքանչյուր կիսամյակի կտրվածքով իրականացվում է հաշվետվության ներկայացում կատարված աշխատանքի, ծրագրային առումով համապատասխան նախատեսված պլանի և դասապրոցեսի արդյունավետ իրականացման վերաբերյալ:

## **Կրթական գործունեություն**

Հաշվետու ուս. տարում համալսարանում կրթական գործընթացը կազմակերպվել է ԵՄԽՀ 2011-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված խնդիրներին ու նպատակներին համապատասխան: Մասնավորապես, շարունակվել են աշխատանքները ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կատարելագործման, եվրոպական չափորոշիչներին համահունչ որակի ներքին ապահովման համակարգի բարելավման, բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի իրականացման, դասավանդման և ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացների բարելավման և մի շարք այլ ուղղություններով:

## **Կրեդիտային համակարգ**

ԵՄԽՀ զարգացման ռազմավարական ծրագրի “Բարձրորակ կրթություն” ռազմավարական նպատակի իրագործման համար առաջադրված խնդիրներից մեկը համալսարանի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի ընդլայնված կիրառությունն ապահովելն է:

Պարբերաբար իրականացվել են “Կրեդիտային համակարգին” նվիրված ճանաչողական և տեղեկատվական սեմինարներ և լսումներ:

Կրեդիտային հենքով ուսումնական ծրագրերի կազմմանը ցուցաբերվել է համակարգային մոտեցում:

Ուսուցումը մագիստրատուրայում բարելավելու նպատակով Մովսես Խորենացու անվան համալսարանում գործուն աշխատանքներ են տարվում կրեդիտային հենքով մագիստրոսական ուսումնական պլանների և ծրագրերի առավել հստակ կիրառման ուղղությամբ:

Ներկայումս աշխատանքներ են տարվում կրեդիտային համակարգի ընդլայնման, սովորողների և աշխատակազմի լայն շարժունության ապահովման ուղղություններով:



## **Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում**

Հաշվետու ուսումնական տարում ձեռնարկվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Իրականացվել է բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների և ԵՄԽՀ-ի միջև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացը:

Հաշվետու ուս.տարվա ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հաշվառվել է լսարանային ֆոնդը, իրականացվել են աշխատանքներ այն արդյունավետ օգտագործելու և դասերի կանոնավոր կայացման ուղղությամբ:

Զեղչերի կիրառման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով ուսումնամեթոդական վարչությունը շարունակել է առաջադիմության վերահսկման աշխատանքները:

## **Ուսումնական պլանների մշտադիտարկում և վերանայում**

Վերանայվել են ուս. պլանները, դրանք փոփոխվել են՝ հաշվի առնելով համալսարանի ստրատեգիական և տակտիկական խնդիրները, որոնք նպաստում են ուսանողների շարժունությանը: Ուս. պլանների փոփոխման անհրաժեշտությունը պայմանավորված էր ՀՀ կառավարության 2011թ.-ի օգոստոսի 25-ի N1240-Ն որոշման հետ (բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության 2009թ. հուլիսի 16-ի N938-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին): Սույն որոշմամբ սահմանված կարգով ուսանողների տեղափոխումը թույլատրվում է, եթե տեղափոխման պահին ուսումնական ծրագրի և ընդհանուր բուհի ծրագրերի բովանդակային պարբերությամբ պայմանավորված առարկայական տարբերությունների թիվը չի գերազանցում 20 կրեդիտը: Այս նոր կարգով համեմատած նախկին կարգերի հետ (ընդ. է 2009թ. հուլիսի 16-ի N938 -Ն որոշմամբ) դժվարացել է ուսանողների տեղափոխությունը: Միաժամանակ նաև հաշվի է առնվել նաև հետևյալ հանգամանքը, որ

ա) դիմորդները բուհ են ընդունվում առկա բաժնում ընդունելության քննությունների միասնական համակարգով (ԳԹԿ-ի կողմից կազմակերպված) և շատ անգամ հարցերը լրացնելիս գրվում են այնպիսի մասնագիտություններ, որոնք հետագայում ստացվում է, որ դիմորդի համար այնքան էլ նախընտրելի չէ:

բ) Դեռևս բուհ ընդունվելուց առաջ և ընդունվելուց հետո առաջին կուրսում դիմորդները (կամ ուսանողները) վերջնականապես կողմնորոշված չեն մասնագիտությունների ընտրության հարցում և անհրաժեշտություն է առաջանում ուսումնառության ընթացքում փոխել մասնագիտությունը:

գ) Ելնելով ուսանողների սոցիալական խնդիրներից երբեմն անհրաժեշտություն է առաջանում փոխել նաև ուսուցման ձևը (առկայից հեռակա կամ հեռակայից առկա տեղափոխվելով):

Որոշվեց բուհի ուսումնական պլանը փոխել այնպես, որ ուս. պլանի նախկին ընդհանուր ծավալը թողնելով նույնը, տարբեր մասնագիտությունների համար նախատեսված ընդհանուր առարկաները (հիմնականում սոցիալ-տնտեսական և հումանիտար բլոկից) տեղափոխել (եթե դա հնարավոր է) առաջին կուրս, որպեսզի ուսանողների շարժունության և տեղափոխման հնարավորությունները առաջին կուրսի ավարտին առավել հնարավոր լինի:

Վերանայված ուսումնական պլանները 2012-13 ուս. տարվանից սկսած կիրառվում են I (առաջին) կուրսի ուսանողների համար և շարունակական ընթացք կատանան:

ԵՄԽՀ-ում սահմանված են ուսման վարձի զեղչեր 15-50%: Զեղչեր գերազանցիկների, միակողմանի և երկկողմանի ծնողագուրկ երեխաների, միևնույն ընտանիքից սովորող երկրորդ երեխայի, I կամ II կարգի հաշմանդամ և այլ կատեգորիաների երեխաների համար:

Ուսումնական գործընթացում խիստ կարևորվում է ուսանողական խորհրդի (ՈԻԽ) և ուսանողական գիտական ընկերության (ՈԻԳԸ) դերը:

ՈԻԽ-ի և ՈԻԳԸ-ի նիստերում պարբերաբար քննարկվում են կարգապահական, առաջադիմության միջոցառումների կազմակերպման, գրական զեղարվեստական խմբերի գործունեությանը վերաբերվող հարցեր: Այսօր էլ ՈԻԽ -ի

առջև դրված են խնդիրներ՝ ավելացնել և զարգացնել բուհի նախորդ տարիների ՌԻՄ-ի ակտիվ գործունեությունը և բարի ավանդույթները:

Երկար տարիներ ԵՄԽՀ-ի ՌԻՄ-ը եղել է ողջ հանրապետության բուհերի ՌԻՄ-ից ամենաակտիվներից մեկը: Այդ տարիներին ՌԻՄ-ը հասել է բազմաթիվ հաջողությունների (նախագահներ՝ Ն. Նորիկյան, Գ. Սահակյան, Ա.Բարսեղյան):

ՌԻՄ-ում ծավալված ակտիվ աշխատանքները լավագույն փորձ հանդիսացան վերոհիշյալ ուսանողների ավարտելուց հետո նրանց հետագա աշխատանքում հաջողությունների հասնելու համար:

Այսօր Ն.Նորիկյանը աշխատում է ՀՀ ՊՆ իրավաբանական վարչությունում: Գ.Սահակյանը ղեկավարում է իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը: Արմինե Բարսեղյանը ՀՀ ԿԳ նախարարությունում բաժնի վարիչ է, միաժամանակ ղեկավարում է ՀՀ “Ոչ պետական բուհերի ասոցիացիա” ՀԿ-ը:

2012թ. բուհի ուս.խորհրդի ակտիվիստներ Մարիաննա Գրիգորյանը և Գայանե Սուքիասյանը մասնակցել են Ադվերանում կազմակերպված միջազգային կոնֆերանսին և համագործակցել ուսանողական ձայն միջազգային կազմակերպության հետ:

2011/12 ուս.տարում պատրաստվել և շրջանավարտներին է հանձնվել 271 դիպլոմ, որից 11-ը մագիստրատուրայում, 260-ը՝ բակալավրիատում, այդ թվում բակալավրիատի առկա բաժնում 197 դիպլոմ, որից 22-ը գերազանցության, իսկ հեռակա բաժնում 63 դիպլոմ, որից 3-ը գերազանցության:

Հաշվարկվել և վերահսկվել է ուսանողական շարժը: Ղեկավարվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:

Հաշվետու տարում ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել 1-ԳՄ և 3-ԳՄ ձևաչափով վիճակագրական հաշվետվությունները, որոնք ներառում են քննությունների արդյունքները և շրջանավարտների վերաբերյալ այլ տվյալներ, ինչպես նաև ԵՄԽՀ պրոֆեսորադասախոսական կազմին առնչվող տեղեկատվություն: Մշակվել են ամբիոնային բեռնվածությունների, զեղչերի, տեղափոխությունների և քննաշրջանի արդյունքների տվյալները:

Համալսարանում 2012թ.-ից պատշաճ հիմքերի վրա է դրվել ներքուհական վերահսկողության խմբի աշխատանքը: Վերահսկողական խմբի կողմից առանձնահատուկ ուշադրություն է դարձվել յուրաքանչյուր մասնագիտությամբ (հատկապես մասնագիտական աուդիտին) միջանկյալ և հանրագումարային քննությունների անցկացմանը, դրանց արդարության, օբյեկտիվության և թափանցիկության հարցերին:

Կրեդիտային համակարգի անցման հետ կապված վերանայվել են քննական հարցաշարերը: Վերահսկվել են ուսանողների ինքնուրույն և անհատական աշխատանքները, որոնք ներառված են համալսարանի կրթական գործընթացում:

Ուսումնական պլանով նախատեսված կուրսային աշխատանքները և ռեֆերատները կատարվել են ժամանակին: Արդյունքները գոհացուցիչ են:

Պետական ավարտական քննությունները կազմակերպվել և անց են կացվել ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված պահանջներին համապատասխան:

Պրակտիկական ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչներից է, որի ճիշտ կազմակերպումն ու արդյունավետ անցկացումը կրթության որակի գրավականներից են:

Հաշվետու տարում նախապատրաստական համապատասխան աշխատանքներից հետո ուսումնական պլաններով նախատեսված պրակտիկաները իրականացնելու համար համալսարանը տարբեր պետական և ոչ պետական հաստատությունների, հիմնարկների, կազմակերպությունների հետ կնքել է պայմանագրեր, որոնց համապատասխան կազմակերպվել են ուսումնական արտադրական և մանկավարժական պրակտիկաները: Պրակտիկա է անցել 412 ուսանող:

## **Որակի ապահովում**

Համալսարանում զգալի աշխատանք է կատարվել նաև կրթության որակի ապահովման և բարելավման ասպարեզում, ինչը ներկայումս ԵՄԽՀ-ի զարգացման ռազմավարական նշանակություն ունեցող հիմնախնդիրներից է:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են համալսարանում ստեղծված Ռրակի ապահովման կենտրոնի զարգացումը, որակի ապահովման նոր մեխանիզմների մշակման և կատարելագործման գործընթացները: Համալսարանում որակի ապահովման գործընթացներում ներգրավվել են նաև բուհի դասախոսական կազմը և ուսանողության ներկայացուցիչներ, ինչը նպաստել է իրականացվող գործընթացների թափանցիկությանը և հասարակայնությանը: Ակտիվ մասնակցություն և օժանդակություն է ցուցաբերել համալսարանի ղեկավարությունը: Այս ասպարեզում կենտրոնի հիմնախնդիրներից է փոխկապակցված աշխատանքների կազմակերպումը համալսարանի ղեկավարության, ֆակուլտետների, ամբիոնների և ուսանողական կառույցների հետ:

ԵՄԽՀ-ի Ռրակի ապահովման կենտրոնի կողմից իրականացվել են մի շարք կանոնադրական և կանոնակարգային փաստաթղթերի մշակում, վերանայում և ներկայացում գիտ. խորհրդի քննարկմանը: Ներկայացվել է նաև ԵՄԽՀ-ի ներքին որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի նախագիծը:

2011 թ-ից ԵՄԽՀ-ը ակտիվորեն մասնակցում է ՀՀ-ում ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված կոնֆերանսներին և հանդիպումներին, որոնց նպատակն էր ՀՀ համալսարաններում կրթության որակի մշակույթի ձևավորումը, ինքնագնահատման համակարգերի մշակումը և ինտեգրվումը նշված ոլորտում եվրոպական գործընթացներին:

Հաշվետու տարում ԵՄԽՀ-ի Ռրակի ապահովման կենտրոնի աշխատակիցները մասնակցել են՝

- 2012 թ-ի մարտի 1-3-ը Ադվերանում կազմակերպված «Ռրակի ներքին ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում» խորագրով վերապատրաստմանը:
- 2012 թ-ի սեպտեմբերի 28-ին Մ. Հերացու անվան ԵՊԲՀ-ում կազմակերպված «Ինքնագնահատում իրականացնելու մեթոդաբանություն» խորագրով ամփոփիչ համաժողովին:
- 2012 թ-ի հոկտեմբերի 8-ին և 9-ին Մ. Հերացու անվան ԵՊԲՀ-ում որակի ապահովման շաբաթվա շրջանակներում կազմակերպված «Ռրակի

ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության համակարգում» խորագրով շահակիցների երկրորդ համաժողովին:

Համաժողովների նպատակն էր խթանել շահակիցների շրջանում որակի ապահովման վերաբերյալ երկխոսությունը, տարածել տեղեկատվություն ՀՀ կրթության ոլորտում որակի ներքին և արտաքին ապահովման իրավիճակի մասին, քննարկել ապագայի մարտահրավերները և բացահայտել նոր հնարավորություններ:

Հաշվետու տարում համալսարանի Որակի ապահովման կենտրոնը նշված համաժողովներից բացի խորհրդատվական հանդիպումներ և սերտ համագործակցություն է ծավալել ՀՀ ՈԱԱԿ-ի աշխատակազմի հետ:

Նշված համագործակցության արդյունքում ԵՄԽՀ-ը կարող է արձանագրել հետևյալ ձեռքբերումները՝

- ✓ համալսարանում ստեղծվել և զարգանում է ինքնագնահատման համակարգը,
- ✓ ինքնագնահատման գործընթացներում ներգրավվել են ինչպես պրոֆեսորա-դասախոսական, այնպես էլ ուսանողության ներկայացուցիչներ,
- ✓ իրականացվել են Որակի ապահովման կենտրոնի աշխատակազմի վերապատրաստումներ,
- ✓ ներդրվել են բուհի արդյունավետ գործունեության նոր մեխանիզմներ:

ԵՄԽՀ-ում կրթության որակի վերահսկման և շարունակական բարելավմանը նպաստող կարևոր գործոններից են դասավանդման արդյունավետության, բուհի գործունեության վերաբերյալ իրականացվող ուսանողական և դասախոսական հարցումները: Ինչպես նաև բուհում սկիզբ է դրվել շրջանավարտների, պրակտիկա անցկացնող կազմակերպությունների և գործատուների հարցման նոր մեխանիզմներ:

Հարցումներն ընդհանուր առմամբ միտված են ուսումնական գործընթացների, դասավանդման, ուսումնառության և գնահատման կրառվող մեխանիզմների, ամբողջական կրթական ծրագրերի և ուսումնական միջավայրի շարունակական զարգացմանն ու կատարելագործմանը: Հարցումների միջոցով նաև փորձ է արվել բացահայտելու կոռուպցիոն երևույթների առկայության և տարածվածության աստիճանի վերաբերյալ՝ դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու համար:

## **Ընդունելության նախապատրաստում**

Հաշվետու տարում մեծ աշխատանք է տարվել պետական մասնագիտական հաստատությունների 2011/12 ուս.տարվա շրջանավարտների հետ, նրանց ներկայացվել են համալսարանական մասնագիտությունները, ծանոթացրել շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգին:

Խիստ կարևորելով հանրակրթային դպրոցների բարձր դասարանների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ վարչությունը հաշվետու տարվա ընթացքում մայրաքաղաքի և մարզերի 100-ից ավելի դպրոցների աշակերտների համար կազմակերպել է ճանաչողական այցեր և դասախոսություններ:

Վերոհիշյալ համալիր աշխատանքների շնորհիվ է նաև ապահովվել վերջին տարիների դիմորդների թվի անընդհատ աճը (բացառությամբ 2011թ.-ի, երբ դպրոցները շրջանավարտներ չեն ունեցել):

## **Ընդունելություն**

Հաշվետու ուս.տարում բուհ են ընդունվել 151 ուսանող,  
որից մագիստրատուրա – 17

բակալավր (առկա) – 44

բակալավր (հեռակա) – 90

Օտարերկրացիներ ընդունվել են ընդամենը -52

մագիստրատուրա – 9

բակալավր (առկա) – 41

բակալավր (հեռակա) – 2

## **Հիմնական ուսանողական համակազմ**

Հաշվետու ուս.տարում ուսանողների ընդհանուր թիվը - 794

որից մագիստրատուրա – 42

բակալավր (առկա) – 425

բակալավր (հեռակա) – 327

Սովորում են օտարերկրացիներ ընդամենը - 125

մագիստրատուրա – 17

բակալավր (առկա) – 74

բակալավր (հեռակա) – 34

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի N197-Ն որոշման (ոչ պետական բուհերի նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ կարգը հաստատելու մասին) և ՀՀ ԿԳ նախարարի 23.04.2012թ. N337-Ս/Բ հրամանի 2012թ. մայիսի 17-ից մինչև հունիսի 8-ը ԵՄԽՀ-ում կազմակերպվեցին ամփոփիչ ատեստավորման քննություններ բոլոր մասնագիտություններով նախատեսված գրաֆիկով:

ՀՀ ԿԳ նախարարության կողմից բակալավրի կրթական ծրագրով թույլատրված 62 (վաթսուներկու) ուսանողներից քննություններին մասնակցել է 48-ը (քառասունութը), որոնցից 41-ը (քառասունմեկը) քննությունները հանձնել են դրական գնահատականներով, այդ թվում երկու շրջանավարտներ քննությունները հանձնել են “գերազանց” գնահատականներով, որոնցից մեկը քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել է գերազանցության դիպլոմի:

Մագիստրատուրայի կրթական ծրագրով <Օտար լեզու և գրականություն> (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մագիստրոսական թեզեր գրած երկու ուսանողներ պաշտպանել են մագիստրոսական թեզերը <գերազանց> գնահատականներով և արժանացել գերազանցության դիպլոմի:

Պատկերը ըստ մասնագիտությունների հետևյալն է



	Թույլատրվել է մասնակցելու	Մասնակցել են	Միայն դրական գնահատականներ	Միայն գերազանց գնահատականներ	Գերազանցության դիպլոմ	Չեն մասնակցել կամ ստացել են անբավարար
Հայոց լեզու և գրականություն	43	36	34	2	1	9
Օտար լեզու և գրականություն (անգլերեն լեզու)	6	-	-	-	-	6
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	8	5	3	-	-	5
Միջազգային տնտ. հարաբերություններ	5	4	4	-	-	1
Ընդամենը	62	44	41	20	1	21
<b>Մագիստրատուրա</b>						
Օտար լեզու և գրականություն (անգլերեն լեզու)	2	2	2	2	2	-

### **Շրջանավարտները**

2012թ. համալսարանի ռեկտորի հրամանով հավատարմագրված 6 (վեց) մասնագիտությունների գծով առկա բաժնում թույլատրված 199 (մեկ հարյուր իննսունինը) ուսանողներից մասնակցել են բոլորը, որոնցից 197-ը (մեկ հարյուր իննսունյոթ) քննությունները հանձնել են միայն դրական գնահատականներով, այդ թվում 31-ը ստացել են միայն գերազանց գնահատականներ, որոնցից 26-ը պետական քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել են գերազանցության դիպլոմի:

Հեռակա բաժնում ռեկտորի հրամանով քննություններին թույլատրված 65 (վաթսուհինգ) ուսանողներից քննություններին մասնակցել են բոլորը, որոնցից 63 (վաթսուներեքը) ստացել են դրական գնահատականներ, այդ թվում 6 (վեց)

ուսանողներ քննությունները հանձնել են “գերազանց” գնահատականներով, որոնցից 3 (երեքը) պետական քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել են գերազանցության դիպլոմի:

Մագիստրատուրայի բաժնում ռեկտորի հրամանով մագիստրոսական թեզերի պաշտպանության թույլատրված 12 (տասներկու) ուսանողներից մասնակցել են 11 (տասնմեկը), որոնք բոլորն էլ ստացել են դրական գնահատականներ: Նրանցից 8-ը քննական հանձնաժողովի որոշմամբ արժանացել են գերազանցության դիպլոմի:

Ըստ մասնագիտությունների պատկերը հետևյալն է.

	Թույլատրվել է մասնակցելու	Մասնակցել են	Միայն դրական գնահատականներ	Միայն գերազանց գնահատականներ	Գերազանցության դիպլոմ	Չեն մասնակցել կամ ստացել են անբավարար
Հայոց լեզու և գրականություն	25	25	24	8	7	1
Օտար լեզու և գրականու- թյուն (անգլերեն լեզու)	20	20	20	8	8	-
Ինֆորմատիկա և կիրա- ռական մաթեմատիկա	18	18	17	3	3	1
Մանկավարժություն և մեթոդիկա	34	34	34	2	1	-
Միջազգային տնտ. հարաբերություններ	60	60	60	7	4	-
Իրավաբանական	42	42	42	3	3	-
Ընդամենը	199	199	197	33	26	2

**Հեռակա բաժին**

	Թույլատրվել է մասնակցելու	Մասնակցել են	Միայն դրական գնահատականներ	Միայն գերազանց գնահատականներ	Գերազանցության դիպլոմ	Չեն մասնակցել կամ ստացել են անբավարար
Հայոց լեզու և գրականություն	9	9	9	-	-	-
Օտար լեզու և գրականություն (անգլերեն լեզու)	4	4	4	-	-	-
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	9	9	8	-	-	1
Մանկավարժություն և մեթոդիկա	11	11	11	-	-	-
Միջազգային տնտ. հարաբերություններ	14	14	14	4	1	-
Իրավաբանական	18	18	17	2	2	1
Ընդամենը	65	65	63	6	3	2

**Մագիստրատուրայի բաժին**

	Թույլատրվել է մասնակցելու	Մասնակցել են	Միայն դրական գնահատականներ	Միայն գերազանց գնահատականներ	Գերազանցության դիպլոմ	Զեն մասնակցել կամ ստացել են անբավարար
Հայոց լեզու և գրականություն	4	4	4	4	2	1
Օտար լեզու և գրականություն (անգլերեն լեզու)	4	4	4	4	3	-
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	1	1	1	1	1	-
Մանկավարժություն և մեթոդիկա	1	1	1	1	-	-
Միջազգային տնտ. հարաբերություններ	1	1	1	1	1	-
Իրավաբանական	1	1	1	1	1	-
Ընդամենը	12	11	11	11	8	1

**Դասախոսական կազմ**

1. Դասախոսների ընդհանուր թիվը – 47
  - որից հիմնական – 28
2. Գիտ. դոկտոր կամ պրոֆեսոր - 2
  - որից հիմնական – 0
3. Գիտ. թեկնածու, դոցենտ - 25
  - որից հիմնական – 13
4. Դասախոս կամ ասիստենտ – 20
  - որից հիմնական – 15

## **Դասախոսների որակավորման բարձրացում և մասնագետների վերապատրաստում**

ԵՄԽՀ դասախոսական կազմի մասնագիտական որակն ու գործունեությունն ապահովելու նպատակով կատարել և ապագայում պլանավորել է կատարելու մի շարք ընթացակարգեր:

### **Պլանավորում և կառավարում**

Աշխատանքներ են տարվել ԵՄԽՀ 2011/15 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման մոնիթորինգի ուղղությամբ: Մասնավորապես՝ ծրագրի իրականացման ժամակացույց-պլանում հաշվետու ուս.տարվա համար նախատեսված գործողությունների կատարողականի մոնիթորինգի համաձայն 2011/12 ուս.տարում նախատեսված խնդիրների իրականացմանն ուղղված գործողությունները և միջոցառումները հիմնականում կատարվել են:

ԵՄԽՀ որակի ինքնագնահատման իրականացման շրջանակներում կատարվել է համալսարանի ուժեղ և թույլ կողմերի գնահատում (SWOT վերլուծություն) ԵՄԽՀ հետագա գործունեությունը և ռազմավարությունը առավել արդյունավետ կերպով ուղղորդելու համար:

### **Գիտահետազոտական գործունեություն**

ԵՄԽՀ հաշվետու ուսումնական տարում որոշակի աշխատանքներ են կատարվել գիտահետազոտական աշխատանքների բնագավառում: Բոլոնիայի գործընթացի շրջանակներում առաջնային են դառնում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից գիտահետազոտական աշխատանքների կատարումը և դրա խրախուսումը բուհի կողմից:

Համալսարանի դասախոսների ուժերով հրատարակվել են՝

1. Ռուդիկ Օհանյան - Ուսումնամեթոդական ձեռնարկ «Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա», «Նահապետ» հրատարակչություն, Երևան 2012թ.
2. Բաղադրյալ Մարիաննա - 1) Фразеологизмы с названиями животных, характеризующие качества человека в армянском, русском и английском языках - ՀՊՃՀ տարեկան գիտաժողով (ընթացքի մեջ է), 2) фразеологические единицы со значением «внешность человека» в армянском, русском и английском языках.
3. Գալստյան Բակուր - Հայոց լեզու (ուս. ձեռնարկ) ՄԷՄԻ-ի երևանյան մասնաճյուղ, «Արմիկուս» հրատ., Երևան-2012թ.
4. Գալստյան Օլգա - Ավիարնկերության գործունեության կառավարման տնտեսական արդյունավետության բարձրացման հարցերը, ՀՀ պետության և սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, գիտական հոդվածների ժողովածու - Երևան 2012թ.
5. Կարագուլյան Հասմիկ - Հայոց լեզու (ուս. ձեռնարկ) ՄԷՄԻ-ի երևանյան մասնաճյուղ, «Արմիկուս» հրատ., Երևան-2012թ.
6. Հարությունյան Արմեն - Մենեջմենթ, կառավարում (ուս. ձեռնարկ) Երևան, «Ճարտարագետ» 2012 (համահեղինակությամբ)
7. Թորոսյան Դավիթ - Плоские задачи для составной плоскости с трещинами между материалами. ЕГУ-2012 (ընթացքի մեջ է)
8. Առաքելյան Վալերի, Միմոնյան Մ. Ռ. - Նորամուծության գործընթացների մշակման ռազմավարության հիմնախնդիրները արդի պայմաններում - Երևան «Նահապետ» 2012թ., 135 էջ
9. Առաքելյան Վալերի, Ղուլոյան Հ. Որակի կառավարման հիմնախնդիրները արդի պայմաններում - Երևան «Նահապետ» 2012թ., 130 էջ

### **Միջազգային համագործակցություն**

Հաշվետու ուս. տարում ԵՄԽՀ-ն կնքել է պայմանագիր TIRI միջազգային կազմակերպության հետ:

2012թ. օգոստոսի 19-ից մինչև 24-ը բուհը մասնակցել է TIRI-ի ծրագրով Ծաղկաձորում անցկացված միջազգային կոնֆերանսին:

### **Հանրային կապեր և տեղեկատվական համակարգեր**

ԵՄԽՀ հասարակայնության հետ կապերի ոլորտը հանդիսանում է ԵՄԽՀ զարգացման ռազմավարական ուղղության կարևորագույն մաս և արտացոլված է ԵՄԽՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2011-15) համապատասխան դրույթներում:

Աշխատանքները գրվում են հիմնականում հետևյալ ուղղություններով.

- համագործակցություն տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ, միջոցառումների լուսաբանում;
- <<Մովսես Խորենացի>> գիտական հանդեսի հրատարակում;
- մեթոդական աշխատանքների իրականացում;
- համացանցային ռեսուրսների զարգացում և համացանցային տիրույթում ԵՄԽՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածում;
- ֆոտո- և տեսանյութերի ստեղծում և արխիվացում;
- պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և տարբեր կառույցների հետ աշխատանքներ:

Հետևողական աշխատանք է կատարվել ԵՄԽՀ-ում հանրային նշանակության միջոցառումների պատշաճ լուսաբանման ուղղությամբ: ԶԼՄ-ի, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ԵՄԽՀ-ին հասցեագրված տեղեկատվություն ստանալու հարցումներին օրենքով սահմանված ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

Համալսարանում արդյունավետ գործում են երկու ինտերնետային կայքեր.

1. [xorhamalsaran.info.am](http://xorhamalsaran.info.am)

2. [mkhu.am](http://mkhu.am)

Կայքի “Նորություններ” բաժնում հայերեն և անգլերեն լեզուներով տեղ են գտել ճանաչողական և տեղեկատվական բնույթի բազմաթիվ նյութեր: Ապահովվել է

առցանց հետադարձ կապ, ինչպես նաև մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով ստացված նամակները:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն ու զարգացումն ԵՄԽՀ-ում ունեն խիստ կարևոր ռազմավարական նշանակություն և գտնվել են անմիջական ուշադրության ներքո:

## **Աշխատանքը ուսանողների և շրջանավարտների հետ**

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՄԽՀ ուս. խորհուրդը շարունակել է իր գործունեությունը՝ պաշտպանելով ուսանողների շահերն ու իրավունքները, ապահովելով ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, մասնակցելով ուսումնական գործընթացի և այլ աշխատանքների կազմակերպմանը և առաջկցելով ուսանողության համար բարենպաստ կրթական միջավայրի ձևավորմանը:

ՈՒԽ աշխատանքներում էական կարևորություն ունի ուսանողների գործող կրթական համակարգի, նրանց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Աշխատանքներ են իրականացվել ուսանողությանը կրեդիտային համակարգին ծանոթացնելու և այն ավելի ընկալելի դարձնելու ուղղությամբ: Կազմակերպվել են քննարկումներ, կլոր սեղաններ, սեմինարներ՝ ԵՄԽՀ ուսանողներին, հատկապես առաջին կուրսեցիներին իրենց իրավունքներին ու պարտականություններին ծանոթացնելու համար:

2012թ. համալսարանում ստեղծվել են շրջանավարտների միություն և կարիերայի զարգացման կենտրոն:

Կենտրոնն ունի իր կանոնադրությունը, որի մեջ արտացոլված են վերջինիս խնդիրներն ու գործառնությունները, կառուցվածքն ու կառավարումը:

Նշենք նաև, որ նախորդ տարիների ընթացքում էլ ԵՄԽՀ-ի ուսանողները մասնակցել են տարբեր միջոցառումների և գրանցել են բազմաթիվ հաջողություններ, այսպես՝



ա) 1999 թ-ին ԵՄԽՀ-ի իրավաբանական ֆակուլտետի ուսանողները մասնակցեցին “Ութի, տատարանն է գալիս” դատախազ-մրցույթին և հանրապետությունում գրավեցին I (առաջին) տեղը:

բ) 2001թ. համալսարանի կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի ուսանողուհի Վիկտորիա Աբրահամյանը մասնակցեց Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700 ամյակին նվիրված գիտաժողովին և կաթողիկոսի կողմից ստացավ շնորհակալագիր:

գ) ուսանողության ակտիվությունը դրսևորվում է նաև քաղաքական հարցերում: Այսպես, օրինակ՝ ԵՄԽՀ-ի ուսանողները ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան մոտ կազմակերպեցին քաղաքական ցույց Իրաքում պատերազմական գործողությունների դադարեցման նպատակով: Ներկայացված էին նաև ցուցապաստառներ “Երեխաներ են սպանվում” խորագրով:

Համալսարանի ուսանողները բացի ՌԻԽ-ի աշխատանքներից, մասնակցում են նաև տարբեր միջոցառումների:

Այսպես, իրավաբանական ֆակուլտետների դեկան Ռ.Չիբուխյանը երկար ժամանակ վարում է Հ1 հեռուստատեսությամբ <<Իմ իրավունքը>> հաղորդաշարը, որին ակտիվորեն մասնակից էր դարձնում նաև բուհի ուսանողներին: Այժմ Ռ.Չիբուխյանը մշտապես մասնակցում է <<Կիսաբաց լուսամուտներ>> հաղորդաշարին, որին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում նաև համալսարանի ուսանողները:

Կենցաղային և առօրյա կյանքում առաջացած իրավաբանական վեճերը ուսանողները վերլուծում են նաև Ռ. Չիբուխյանի հետ, որի շնորհիվ ուսանողները տեսական գիտելիքներին զուգահեռ ձեռք են բերում գործնական կարողություններ և հմտություններ: